Ծուշանիկ Կուրղինյան

Հավատ, հույս և սեր

Հավատի հետ ես վաղուց եմ ծանոթ,
Դեռ վաղ մանկության անհոգ օրերից,
Երբ թոթով լեզուս փափագով խանդոտ
Աղոթք էր կարդում լսած տատիկից:

Հույսն ինձ սնուցեց թևերի վրա,
Որպես գթասիրտ հոգատար դայակ .
Երազով նախշեց օրերս ապագա,
Ու ոսկեզօծեց մտքերս անտակ:

Սերը . . . զարթնել է իմ սրտի խորքում
Սկզբում բարի, որպես ոգու շունչ,
Եվ ապա կյանքի գրկում անխնդուն
Քրքրել սիրտս, խափանել անուրջ:

Եվ իմ տարաբախտ կյանքիս օրերին
Ինչո՞ւ չեմ կարող կցորդել նրանց,
Որ սերն ու հույսը գրկած հավատին
Իշխեին միահեծ կյանքիս դառնացած . . .

1906 թ .